

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 բուրլի. կէս տարվան 6 բուր. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիցզով.

Յայտարարութիւններ համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ. Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յովսէփ Յովհաննիսեան Սայփիեան, Վարդուհի Յովհաննիսեան Բարխուդարեան, Նունէ Յովհաննիսեան Նարինեան եւ Թամարա Յովհաննիսեան Գալանթարեան, ցաւօք արտի յայտնելով իրանց սիրելի հօր՝

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՅՈՎՍԵՓԵԱՆ ՍԱՅԻՓԵԱՆԻ

Քանի, խնդրում են ազգականներին եւ ծանօթներին չնորձ բերել կիրակի, դեկտեմբերի 3-ին, առաւօտեան 10 ժամին, հանգուցեալի յուղարկուողութեանը, նրա սեփական ֆունդի (Մուխրանկայա փողոց, № 28) դէպի Աւետեաց (Ջորաշէնի) եկեղեցին եւ այնտեղից Վերայի գերեզմանատուն: Հոգեհանգիստ լինելու է դեկտեմբերի 2-ին, շաբաթ, երեկոյեան 6 ժամին:

1—1

Վաղը, կիրակի, ամսին 3-ին

ՍԱՐԳԻՍ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

ժամկան տարեգրծի օրը, ու Նշան եկեղեցում կը մատուցվի պատարագ եւ ապա կը կատարվի հոգեհանգիստ, որի մասին հանգուցեալի մայրը, ջորը եւ եղբայրը յայտնում են ազգականներին ու ծանօթներին: Պատարագի սկիզբն է առաւօտեան ժամի 10-ին, իսկ հոգեհանգիստը կը սկսվի 11½-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տարածված ախտ.—Ներֆին ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Արձագանքներ. Միթէ դեռ պէտք է ապացուցանել. Նամակ Ներքին-Ախտայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գաւառական Նամակներ:

ՏԱՐԱՎՈՐԱԾ ԱՌՏ

Արդեօք բացառութիւն է, թէ կանօն եկեղեցական փողերի վատնումը: Այդ հարցը օտարոտի կը թւի առաջին անգամից, բայց նա բնական է մեր իրականութեան արտայայտութիւնների առաջ: Այո, ճիշդ է, որ եկեղեցական փողերի վատնումը պէտք է բացառութիւն լինէր եւ միայն բացառութիւն. բայց, դժբաղդաբար, նա ներկայանում է իբրեւ կանօն եւ գործադրութեան ընդունված մի եղանակ:

Նոյն իսկ Թիֆլիսի նման մի նշանաւոր կենտրոնում մենք ամէն օր լսում ենք հազար տեսակ լուրեր մեր եկեղեցիների մէջ տիրող կարգերի մասին: Շատ քիչ եկեղեցիներ կան, որոնց փողերի եւ գոյքի

մասին թիրիմացութիւններ չը լինեն եւ ծխականները հանգիստ սրտով ասեն, թէ հաշիւները ճիշդ են, մաքուր եւ հարազատ: Այդ տխուր փաստերը, որոնք հանգեւ եկան Գամոյեանց, Գուկիայի Նորաշէն, Մոզնու եւ ուրիշ եկեղեցիների փողերի կամ զարդերի վերաբերութեամբ, այն սուր կռիւները եւ ընդհարումները, որոնք առաջ եկան եւ առաջ են գալիս մանրամասն հաշիւ պահանջներով ժամանակ, ապացոյց են, որ ախտը շատ է տարածված, մեծ ճիւղեր է արձակել եւ կարօտ է խիստ միջոցներ՝ արմատախիլ լինելու համար:

Եթէ հոգեւոր իշխանութիւնը ծխականների անմիջական գործակցութեամբ սկսէ անխնայ հայածանք գեղծումների դէմ, նա կարող կը լինէր նպաստել աւելի բարեւոյ կարգ հաստատելուն. սակայն նա մինչեւ այժմ թող է վերաբերվել այն կարեւոր հարցում եւ շատ դժգոյքներով նա ոչ միայն պաշտպան չէ հանգիստացել հաշիւ պահանջողների եւ գեղծումները մերկացնողների համար, այլ նոյն իսկ կատարել է հակառակ դեր:

Իործը կարեւոր է եւ հոգեւոր իշխանութեան դիրքը պատասխանատու: Հաշուեւ տուութեան մէջ եղած գեղծումները չեն

կարող ներել եւ թողարկել համարվել ոչ մի կանօնաւոր հաստատութեան մէջ, ոչ մի կուլտուրական հասարակութեան մէջ: Թող հոգեւոր իշխանութիւնը վերջապէս ձեռնարկէ խիստ միջոցների եւ մշտական հսկողութեան ու վերահաստութեան միջոցով առաջն առնէ մի ակտի, որ ամօթաբեր է թէ ծխական համայնքի եւ թէ հոգեւոր իշխանութեան համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ XXV

Բաւական ժամանակ անցաւ Խորէն Ստեփանէի մահից յետոյ, եւ այն յարգանքը, որ մենք տածում ենք դէպի հանգուցեալի մտերիմների վիշաք, տեղի է տալիս այն պարտականութեան, որ ծանրանում է հրապարակախօսութեամբ պարագոյող ամէն մի անձի վրա եւ որ պահանջում է ձայն բարձրացնել ամէն անգամ, երբ վտանգված է հասարակական շահը:

Մենք ուզում ենք իտեղի Խորէն Ստեփանէի կտակի մասին: Այդ կտակը դեռ հրատարակված չէ եւ չէ դարձել հասարակութեան սեփականութիւն, ուստի մենք չենք խօսի նրա մասին ըստ էութեան: Մենք կուզէինք մի քանի խօսք ասել միայն այն հարցի մասին, թէ արժանի ցանկալի է, որ մարդիկ կտակին իրանց կարողութիւնը ոչ իրանց ժամանակակիցներին, այլ հեռուօր սերունդներին, ինչպէս այդ արել է հանգուցեալ Ստեփանէն, կտակելով իր ունեցած 25 հազար բուրլի գումարը այն պայմանով, որ նա գործ դրվի 130 կամ աւելի տարիներից յետոյ, երբ, շահ չափի վրա գալով, կը հասնի 14 միլիօն գումարի:

Այդ արդէն երկրորդ աչքի ընկնող օրինակն է այդպիսի կտակի: Այդպէս էր կտակել Սարգիս Եպիսկոպոս Զալալեան. այդպէս կտակեց Խորէն Ստեփանէ, որ շատ աւելի հեղինակութիւն եւ համակրութիւն էր վայելում մեր հասարակութեան մէջ, քան Զալալեան, եւ որի օրինակին, այդ պատճառով, կարող են հետեւել շատ աւելի մարդիկ:

Հէնց այդ հանգամանքն է, որ ստիպում է մեզ խօսել եւ, յանուն այն սկզբունքի, որ «Մենք պարտական ենք մեռածներին այն, ինչ որ կենդանի մարդկանց — ճշմարտութիւն» («Nous devons aux morts ce que nous devons aux vivants, la vérité»), անկեղծօրէն յայտնել, որ կտակի այդ ձեւը մենք համարում ենք եւ անարդար դէպի ժամանակակիցները, եւ պա-

կաւ արդիւնաւոր, եւ նոյն իսկ երեւին բոլորովին ապարդիւն:

Որ այդքան երկար ժամանակով կտակված գումարը կարող է շատ վտանգների ենթարկվել, այդ պարզ է: Որ նշանակված ժամանակին կարող է կամ գումարը գոյութիւն չունենալ եւ կամ այն անհատը կամ հիմնարկութիւնը, որի օգտին կտակված է, այդ էլ հասկանալի է: Հասկանալի է եւ այն, որ կտակի այդ ձեւը մի տեսակ անարդարութիւն է ժամանակակիցների վերաբերմամբ, որոնցից անպատճառ, վատութեան հետ, եւ շատ լաւութիւն տեսած կը լինեն կտակ անողները եւ որոնց վերաբերմամբ, յամենայն դէպս, նրանք աւելի կենդանի, աւելի ջերմ զգացմունք կարող են ունենալ, քան ապագայ սերունդների վերաբերմամբ:

Այնքան պարզ չը լինի դուցէ այն հարցը, թէ, եթէ կտակված գումարը նոյն իսկ չը վերանայվի ապագայում, որ դժգոյքում աւելի արդիւնաւէտ կը լինէր նա—այն դժգոյքում, երբ նա անմիջապէս գործ դրվէր հասարակական կարիքների վրա, թէ այն դժգոյքում, երբ նա հարկւր տարուց յետոյ / հազարապատկելով գործ դրվի ապագայի պահանջների համար:

Սարգիս Եպիսկոպոս Զալալեան եւ Խորէն Եպիսկոպոս Ստեփանէ իրանց կտակներով պնդում են, թէ վերջին դժգոյքում արդիւնքը աւելի մեծ կը լինի: Մեզ հակառակն է ճիշդ թւում:

Եւ ահա ինչու: Եթէ 25000 բուրլին շահ է բերելու հարկւր եւ աւելի տարիների ընթացքում, միթէ այն բարի գործը, որ կարող էր կատարվել հէնց այժմ այդ 25000 բուրլով, շահ չէր բերելու հարկւր եւ աւելի տարիների ընթացքում: Միթէ երբ դուք հնարաւորութիւն էք տալիս մի գիւղացու վերականգնել իր քայքայված տնտեսութիւնը, մի ուսանողի՝ շարունակել իր ուսումը, մի խեղճ կնոջ՝ չը ծախել իր պատիւը իր որբերին կերակրելու համար, մի հեղինակի՝ տպել իր գիրքը եւ այլն եւ այլն,—միթէ, ասում ենք, դուք դրանով օգնում էք միայն այդ գիւղացու, միայն այդ ուսանողին, այդ կնոջ, այդ հեղինակին, եւ ոչ թէ նրանց միջոցով նոյնպէս եւ նրանց չլրացատողներին եւ նրանց ապագայ սերունդներին:

Դէ հաշուեցէք այժմ գործի այդ տոկոսը ու համեմատեցէք նրան փողի տոկոսի հետ եւ կը տեսնէք, որ գործի տոկոսը աւելի մեծ է:

S. Յ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԱՒԱՍԻՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

„Alles war gesagt, doch
„Alles bleibt zu sagen.“
G ö t t e

Եթէ չինական օրէնքների ամբողջութեան մէջ դուք որոնելու լինէք մի գրութիւն, որի չուր-չը խմբովն է չինական օրէնագրութիւնը, դուք չէք կարող կանգ չառնել այն օրէնքների ժողովածուի վրա, որոնք վերաբերվում են հասարակական ժողովներին (общественный сходъ) եւ այն լիազօրութիւններին, որոնք շնորհվում են նրանց:

Ուշադիր կերպով ուսումնասիրելով օրէնքների այդ շարքը, դուք կը համաձայնվէք մեզ հետ, որ այդ գրութիւնը պարունակում է իր մէջ ազատարար բէֆօրմի ամբողջ իմաստը, որ այդ օրէնքներում վերին աստիճանի տաղանդաւոր կերպով ասվեց նրանց ամբողջ փիլիսօփայութիւնը. այդ օրէնքները երկար, շատ երկար երկունքի մէջ էին, չը նայելով որ նրանց այնպէս սրտատրոփ սպասում էր ամբողջ Ռուսաստանը...

Եթէ այժմ, աւելի քան երեսուն տարի գո-

յութիւն ունենալուց յետոյ, մեր առաջ դրված է չինական օրէնքների վերլուծման խնդիրը, այդ դեռ մեզ իրաւունք չէ տալիս կարծելու, որ այդ օրէնքները հնացել են, որ մեր կեանքն առաջ է գնացել եւ որ օրէնագրութիւնը, որպէս հետեւանք կեանքի պահանջների, պէտք է վերակազմվի համաձայն արդի պահանջների եւ պէտքերի: Վերին աստիճանի նշանաւոր է, որ այն օրէնքները, որոնք խմբագրվել են մեր գիւղերի համար նշանաւոր վաթսուհին թւականներին, նոյն իսկ այդքան տարի անցնելուց յետոյ անգամ, առիթ չեն տուել նկատելու, որ այդ օրէնքները կիսատ են, մենք ոչ թէ իրաւունք չունենք մատնացոյց անելու այդ օրէնագրութեան բաց տեղերի վրա, այլ մեզ մնում է միայն պատկառել այն խմբագրութեան առաջ, որ այնքան մարդասէր եւ այնքան խոր մտածված օրէնքներ գրեց երեւին իրաւագործի ամբողջ համար: Իայն այդ բոլորը, ի հարկէ, գործի տեսական կողմն է:

Դառնալով այդ օրէնքների կեանքի մէջ գործադրութեան խնդիրն, մենք չենք կարող գրել թէ ամէն մի քայլափոխում չը հանդիպել մեր կեանքի այնպիսի պայմաններին, որոնք հարցի երկրորդական կողմը լինելով, չէին կարող նախադրութեան լինել օրէնագրի կողմից: Գուցէ այդ պատահուածքները շատ փոքր նշանակութիւն ունեն օրէնագրութեան իմաստի, նրա ամբողջութեան համար, դուցէ նրանք գրեթէ

չեն խանգարում մեր գիւղական դատավարութիւնը, բայց, այնու ամենայնիւ, աներկբայելի է, որ այդ խոչընդոտները, այսպէս թէ այնպէս, պէտք է հարթվեն, պէտք է հարթվեն նոյն իսկ հէնց այն հիման վրա, որ օրէնքը աստուծ չունի: Եւ հէնց այդ, ընդհանրապէս, խորհրդածութիւններն է, որ մեր յինական օրէնքների վերլուծման խնդիրը:

Անցնելով այժմ մեզ այստեղ հետաքրքրող խնդրին, չենք կարող գէթ մի երկու խօսքով չը պարզել, թէ ինչպէս է ընդհանրապէս ներկայացնում իրան մեր ամբողջ այն օրէնքների տարի սրանից առաջ ըստ իրան Գահի բարձրութիւնից: Եւ ասել այստեղ թէ մեր գիւղը, այսքան տարի ճանաչված իրաւունքներով հանդերձ, այսօր ոչ մի հասկացողութիւն չունի այն օրէնքների մասին, որոնք կազմում են չինական ինքնավարութեան աղը, հազիւ թէ պէտք լինի, քանի որ մեզանում չը գիտեն նոյն իսկ, որ գիւղացին ունի իր սեփական, առանձին օրէնքները, որ այդ օրէնքները գրվել են բացառապէս նրա համար եւ այն եւ այլն: Իսկ ինչ վերաբերում է ամբողջ այն կամքին, որ այնպէս որոշ է այնպէս լրակատար ասված է հասարակական ժողովներին վերաբերեալ կանօնադրութեան մէջ, թող ներկի մեզ ասելու այստեղ, որ այդ բանը գոյութիւն չունի մեր գիւղում: Հասարակական ժողովներին վե-

րաբերված օրէնքները ոչ մի գործադրութիւն չունեն մեզանում: Այդ ժողովները գոյութիւն ունեն միայն թղթի վրա. ամբողջ Անդրկովկասի տարածութեան վրա դուք չէք կարող ցոյց տալ մեզ մի անկիւն անգամ, ուր ամբողջ ինքնաբերաբար ժողովներ իր կարիքների եւ պէտքերի համար խորհնու:

Միակ դէպքը, երբ այդ ժողովը գումարվում է, այն էլ Աստուծո գիտէ, թէ ինչ միջոցներով,—դա գիւղական պաշտօնեաների, գլխաւորապէս չինական տանուտէրի, գլխաւորութեան ժամանակն է: Մնացած բոլոր գործերի վերաբերմամբ ժողով չէ գումարվում. տանուտէրը, մի քանի անձանց հետ, որոնք անմիջապէս կապ ունեն այն կամ այն հարցի հետ (օրինակ, մէկին հասարակական վճիռ է պէտք գիւղում կրպակ բանալու, միւսին հասարակութեան համաձայնութիւնն է հարկաւոր ջրաղաց շինելու, երրորդը—մի քանի տարի անաղող գորութիւն, կամ գումարներ լինելու անկող, ուզում է քահանայ դառնալ—դարձեալ համախօսական է պէտք եւ այլն), մանում է մի որ եւ է կրպակ եւ այնտեղ, Բաքուի սեղանի վրա առատ նուիրաբերութիւն անելուց յետոյ, գիւղական դրագիրը, կամ նոյն դուրքանչին, կազմում է հասարակական կամքի տեկտոր: Սկզբից ժողովում են այն ատորաւ գրութիւնները, որոնք կապվածի են, ուսով, խաթրով, օղիով, իսկ յետոյ թերթը ծածկվում

ՄԻԹԷ ԴԵՌ ՊԵՏԻ Ե ԱՊՍՏՈՒՑԱՆԵՆԸ
(Նամակ Նոր-Նախիջևանից)

Պ. Ջաքարեանցի «Քաջանայական ոտնկեր հարցը Այնթափից» յոգուածը գրգռեց մեր առանձին ուշադրութիւնը երկու կողմից, նախ նիւթը հետաքրքրական է եւ ապա ժողովի հետեւանքները աւելի եւս հետաքրքրական:

Այն, ինչ որ ուրիշ զարգացած ազգերի մէջ տարրական, աւետարանական ճշմարտութիւն է, մեզանում դեռ վիճելի է, մեզանում դեռ պէտք է ապացուցանել...

Անպայման բոլորիս լաւ յայտնի է, որ հայ քաջանայանքի նիւթական վիճակը անմխիթար դրութեան մէջ է. անհրաժեշտ է նրան բարեփոխել եւ որչափ էլ չուտ, այնքան լաւ: Բարեփոխելու միակ միջոցը— ոտնկեր է: Ռոճիկը կը տայ քաջանային անկախութիւն նիւթական կողմից եւ կը բարձրացնէ նրա կոչումը բարոյական տեսակէտից: Քաջանայն աղքատի նըման ձեռքը չի պարզի ծխականին, նա կը ստանայ այն, ինչ որ պարտական են նրան տալ, նա չի ունենայ վախ, որ այս ինչ, այն ինչ ծրարականի կամահանութիւնից նրա գերդաստանի վիճակն է կախած: Սուրբ խորանի առաջ, եկեղեցական ամբիօնից նա կարող է խօսել եւ ծառայել, իբրեւ իսկական քաջանայ. եւ մենք այնչափ կարօտ ենք եւ ծարաւ իսկական քաջանայանքի խօսքին եւ ծառայութեան: Տուրքերը, ի հարկէ, պէտք է լինեն պարտադիր, որպէս զի ոտնկեր որոշ լինել Պարտադիր Տէր Աստուած, ապա Հայաստանեայց եկեղեցու ուղին, ապա աւետարանը, որը «արգելում է արարողութիւնները եւ խորհուրդները ծախել դրամով»:

Տեսէք այժմ ինչ արժեն այդ գեղեցիկ խօսքերը:

Աւետարանի գրված ժամանակը կեանքի պայմանները ջոկ էին եւ ջոկ այժմ: Վատ քաջանայանքը ապրում են ուտելու համար, լաւերը ուտում են, որպէս զի ապրեն: Ասել կուզէ, որ քաջանային պէտք է ուտել. եւ միթէ միայն ուտելն է Միթէ քաջանայն ուրիշ պիտոյքներ չունի: Եթէ սուրբերը պարտադիր չը լինեն, եկեղեցու ստոր, լիբը, կեղտոտ ծառան, որ իր վերջով, բարձրով արատաւորում է քաջանայի սուրբ կոչումը, միշտ կը գտնէ հնար ստանալ սուրբը եւս աւելի, քան թէ հարկաւոր է: Բայց լուսաւոր, ազնիւ քաջանային միշտ կաշխատէ խաբել անբարեխիղճ ծխականը, որովհետեւ լուսաւոր եւ ազնիւ քաջանայն գոյութիւն չի խոնարհի եւ ձեռքը չի պարզի:

Դա է պատճառը, որ մեզանում շատանում են անուս եւ անկիրթ քաջանայանքը: Մեր Նոր-Նախիջևանի թեմական հոգեւոր դպրոցից միայն երկու-երեք քաջանայանք են դուրս եկած: Միթէ դա ինքն ըստ ինքեան փաստ չէ, որ այլ քաջանայի կոչումը ծանր է ներկայ պայմաններում եւ ոչ այնքան վայել:

Միայն ոտնկեր չէ, որ կը բարձրացնէ հայ քաջանայի վարկը եւ կոչումը: Մենք մեր բարձր հոգեւորականութեան ուշադրութիւնը դարձնում ենք եւ ց եւ ց զի վրա: Հասկացէ՛ք, վերջապէս, ինչ հարկաւորութիւն ունեն հո-

է այն անթիւ ու անհամար ստորագրութիւններով, որոնց Ռուսաստանի գիւղերում շատ բնորոշ կերպով անուանում են «БЕЗОВѢСТНЫЕ»: Այդ վերջինները, ի հարկէ, ոչ մի գաղափար չունեն այն ինչերի մասին, որ վճռվում է նրանց անուանից, իսկ եթէ երբ եւ ինչ իմանան էլ, անտարբեր են դէպի այդ կեղծումը, նրանց բողոքը ոչ մի հետեւանք չէ կարող ունենալ, մանաւանդ որ բողոքելու համար էլ յայտնի արտոտութիւն է պէտք, իսկ այդ արտոտութիւնը այնքան էլ անվտանգ չէ մեզանում... Այդպէս է կազմակերպվում մեզանում հասարակական կամքը, որ այնքան ուժեղ եւ անշաղփ անխախտ է ըստ խմբագրութեան 19 փետրվարի...

Ուշադիր կերպով աչքի անցկացնելով մեր հասարակական վիճիւնները, դուք չէ՛ք կարող չը նկատել, որ այդ համախոսականները կազմելիս շատ անգամ մասնակցել են 7—10 տարեկան զոտանիք: Յայտնի է, որ ամբողջ Անդրկովկասում, որպէս առհասարակ Արեւելքում, կիներ ոչ մի քաղաքացիական իրաւունք չունին: Այրի կիներ, որպէս տան գլուխ, տան մեծը, պահպանելով գիւղական հասարակութեան շրջանում իր տան անտեսական եւ քաղաքացիական նշանակութիւնը, վերապահում է իրան եւ հասարակական գործերում մասնակցութեան իրաւունքը, ուղարկելով այդ ժողովներին իր անչափահաս, 10 տարեկան որդու: Թէեւ այդ կարգը ընդունված է ամենուրեք, ժամանակը եւ երկրի

գեւոր դպրոցները աշակերտները քաջանայանք դառնալու, երբ ամեն մի անկիրթ տիրացու, որ գիտէ միայն գրել եւ կարդալ, կարող է ստանալ այդ կոչումը: Միթէ կարելի չէ գտնէ քաղաքներում այսուհետեւ չը նշանակել քաջանայ, որը աւարտած չէ հոգեւոր դպրանոց:

«Ժողովը մի որոշ կարգաւորութեան չեկաւ: Նա սակաւամարդ էր», վերջապէս է յոգուածը պ. Ջաքարեանցը: Դա մեզ ծանօթ երեւոյթ է: Մեր ժողովները սակաւամարդ են, մեր ժողովներում շատ են խօսում, շատ են վիճում, շատ սքեռեք ցաւացնում, բայց եւ այնպէս մեր ժողովները որոշ եղբակապութեան չեն գալիս, ապարդիւն են: Հարկաւոր չէ միայն վճատվել եւ յուսահատվել: Մենք խորհուրդ կը տայինք, որ սկսել է եւ նոր ժողով էլ կազմել: 25 որ ջուրն էլ կաթիլներով երկաթն է մաշում: Միթէ մենք երկաթից աւելի ենք կոշտացած:

Գուցէ մեր միւս յաջորդներն էլ հետեւեն Մատթէոս վարդապետի օրինակին:

Գր. Ջալիւսեան

ՆԱՄԱԿ ՆԵՐՔԻՆ-ԱՆՏԱՅԻՑ

Նոյեմբերի 23-ին

Ձը նայելով, որ նոյեմբերը արդէն վերջանալու վրա է, դեռ եւս Թաղկաձորում հայաբնակ շարունակում են կալսել «Պայեանները» (կիսածեմ հայանները) միւս եւս ձիւրի տակ: Ժիւնը ամեն օր քերում են հայանը չորացնում, նորից կալսում են եւ կրկին միւս օրը ձիւնը ծածկում է հայաբնակը: Թրջում-թացանում: Այդ դրութեան մէջ շատերը դեռ եւս իրանց պաշարը չեն պատրաստել, միւսները սերմացուն չեն հանել, որ դարձան ժամանակին ցանք սկսել, ուստի հողագործներից շատերը իրանց «դէզերը» պէտք է գարնանը կալսեն, նորից նոր սերմացու հանեն եւ ցանք անեն:

Կալսելու գործին արգելք եղան դեռ օգոստոս եւ սեպտեմբեր ամիսներում տեղացող յորդաւառ անձրեւները, որոնց յաջորդեցին կարկուտ եւ ապա ձիւնը: Կարկուտը վնասեց ցին սորահարթներում ընկած ցանքերը, իսկ դաշտերում եղածները վնասվեցին մասամբ: Սարերի հայաբնակները այնքան վտիտ են եւ այն աստիճանի ցրտահար, որ դեռնիք անգամ սիրտ չեն անում անել, որովհետեւ այդ տեսակ հայաբնակները որակութեան կողմից շատ ցածր տեսակի են պատկանում եւ գրանցից ստացված հացը ուտել չէ լինում: Գարու հացը, որ տեղական ժողովրդի մէջ շատ վատ հռչակ ունի, այս տարի ցորենի հացի հետ հաւասար յատկութիւն ունի, մինչդեռ ցրտահար ցորենի հացը լաւ գարու հացից վատ է:

Այս տարի աւելի կամ, ձիւնը ասած, բոլորովին փչացան ամենալաւ յատկութիւն ունեցող «գօլ-լոյսկա» (անձրի) եւ «վոնդի» անուանված ցորենները: Դրանցից առաջինը, որ այստեղ բերված է Կարսի շրջանից իբրեւ ընտիր սերմացու, անցեալ տարվայ սարսափելի երաշտով թեման ժամանակի աւելի արգելանքներ էր, քան այս տարվայ անձրեւային եղանակներին, երբ այդ հայաբնակիլ բոլորովին կորցրեց իր պայմանները, այսպէս ասած, օրինականացրել են այդ դրութիւնը, բայց, այնու ամենայնիւ, այդ դրութիւնը չունի ոչ իրական եւ ոչ էլ բարոյական raison d'être:

Մեզանում, ուր հողատիրութիւնը համայնական է, ուր հողատիրութեան հարցը վճռում է ինքը, հասարակութիւնը, այդ հարցին վերաբերեալ հասարակական ժողովները շատ մեծ նշանակութիւն ունեն:

Ինչ ասել կուզէ, որ երեխաների մասնակցութիւնը այդ ժողովներում ոչ մի դրական հետեւանք չէ կարող ունենալ այրի կնոջ չափ հերի համար, այդ չափերը միշտ բռնաբարված կը լինեն, որչափ էլ բարեխիղճ լինի այն մեծամասնութիւնը, որ տնօրինում է համայնքի այս կեանքի եւ մահվան նշանակութիւն ունեցող խնդիրը: Պէտք է անպայման այդ կամայականութեան առաջն առնել եւ այդ պէտք է կատարվի, ի հարկէ, ոչ թէ ժամանակաւոր, կողմնակի միջոցներով, այլ օրէնսդրական կերպով, ի դէպ. անտեսութեան ամբողջութիւնը միշտ խախտված կը լինի եւ հազարաւոր այրի կանայք, մերկ ու թշուառ, ստիպված կը լինեն միշտ մուրալ ձեր դռներում...

Այդ տեսակ երեւոյթների հետ միասին, որոնց նախատեսել օրէնսդրել չէր կարող, ի հարկէ, եւ որոնց բայցասական հետեւանքների առաջն այս կամ այն կերպով պէտք է առնել: Գուցէ հանդիպում էք եւ այնպիսի դէպքերի, որոնք նոյնպէս նախատեսված չեն օրէնքով:

Երբ, ուստի, ինչպէս երեւում է, այդ սերմացուն աւելի արդիւնաբեր է երաշտութեան տարիներում, քան անձրեւային: Միւս աեղաւան սերմացուները համեմատաբար բաւարար բերք ունեցան:

Բերքի կողմից արդիւնաբեր հողերը տալիս են 80%, իսկ ցածր հողաբաժինները՝ 5—6-ով աւելի սերմից: Գարին աւելի արդիւնաբեր է այս տարի, քան ցորենը, որը իւրաքանչիւր սայլից ստացվում է 30—40 լիտր (12 ֆ.), այն ինչ գարին շատ տեղեր արդիւնաբերում է մի սայլից անուազն 40—50 լիտր:

Եթէ չը հաշուեն կարկուտի վնասները, որոնց ենթարկվեցին Թաղկաձորի շրջանի մի քանի գիւղերի ցանքերը, այս տարվայ բերքերը, ընդհանրապէս վերցրած՝ բաւարար կարելի է համարել, իսկ որակութեան կողմից հայաբնակները, թէ ցորենը, թէ գարին եւ թէ միւս արդիւնները, վատ տեսակի են պատկանում, հետեւապէս դրանց գնահատութիւնը աւելի է ծան է լինում, քան լաւ յատկութիւն ունեցող հայաբնակներին, որոնք քիչ են ենթարկվել ցրտերի եւ անընդհատ տեղացող անձրեւների աղբեղութեան:

Գ. Ս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի առեւտրական դպրոցի վերառեսուչ Ֆիշեր միջնորդութիւն է յարուցել Ֆինանսների միւնիստրութեան առաջ եւ խնդրել է թոյլ տալ առեւտրական դպրոցին կից հիմնել հաշվապահական դպրոց, առեւտրական թեաքանութեան եւ գերմանական լեզուի կուրսեր, 20 ուրիշ տարեկան վարձով իւրաքանչիւր աւարկայի համար՝ այն պայմանով, որ այդ կուրսերի վերահսկողութիւնը յանձնվի առեւտրական դպրոցի վերառեսուչին:

Գեկտեմբերի 1-ից վրաց «Տնօրիս-Փոքրիկ» ամենօրեայ լրագիրը սկսեց հրատարակվել նոր պրոգրամով եւ մեծացրած ծաւալով: Առաջնորդող յօդաւածում խմբագրութիւնը հրաւեր է կարդում ընթերցող երիտասարդութեան աշակցել խմբագրութեանը ուսումնասիրելու վրաց կենքը բազմակողմանի կերպով, մի բան, որ մինչեւ այժմ կատարվում էր տեղական ուսումնական միջոցով եւ այդպիսով կապել հասարակութիւնը լրագրութեան հետ: Ցանկանում ենք աջողութիւն:

Բազուի ինտելիգենցիայի մի մասի մէջ ծագել է մի համակրելի միտք: Լեւոնային ինժեներ Ն. Ալիբեկեանի նախաձեռնութեամբ հարց է բարձրացրած կազմակերպելու Բազուում ընդհանուր կրթական կուրսեր այն անձանց համար, որոնք ցանկութեան ունեն լրացնել իրանց տեղեկութիւնները գիտութեան զանազան ճիւղերի մէջ: Կուրսերի նախագիծը կազմել է տեղական ուսուցիչների եւ տեխնիկների մի խումբ, իսկ գիմնադրայի գիւրեկտոր Ա. Պրեդոնոսեյեւը ներկայացրել է նախադրեւ տեղական նախագահատնի հաստատելու կուրսերում ենթադրութիւն կայ դասախօսել մաթեմատիկա, աստղագիտութիւն, քիմիա, ֆիզիկա, երկրաբանութիւն, բուսաբանութիւն, եւ որոնց օրինականութիւնը աւելի քան ակնհայտ է: Ամեն մի գիւղական ծուխ, տուն, որ արձանագրված է ընտանեկան ցուցակում (ПОСЕМЕЙНЫЙ СПИСОК), մի ձայնի իրաւունք ունի հասարակական ժողովներում, բայց մեր համախոսականները թերթիկի, դուք կը տեսնէք, որ երբեմն մի տանից վճիկն մասնակցել են մէկ երկու եւ աւելի մարդիկ: Այդ տեսակ ակտերը օրէնքով կամ կորցնում են իրանց նշանակութիւնը, կամ աւելորդ ստորագրութիւնները դուրս ձգվելով այդ տեղից, վճիկը շատ անգամ չէ պարունակում ստորագրութիւնների այնպիսի թիւ, որ պահանջում է այս ակտը օրինաւոր ճանաչելու համար:

Ժամանակի յայտնի տարածութեան վրա, ծուխը, որպէս անտեսական մի ամբողջութիւն, զարգանալով, աճելով, բաժանվում է երկու, երեք եւ աւելի մասերի: Հայրը բաժանում է իր որդիներին, եղբայրները կիսում են հօրից մնացած ժառանգութիւնը եւ այդպիսով մի տանից, որ արձանագրված էր մատենագրով յայտնի համարի տակ, առաջ են գալիս մի քանի ընտանիք, մի քանի ծուխ, որանցից ամեն մէկը ունի սեփական, առանձին անտեսութիւն, հետեւապէս եւ գիւղական գործերում պէտք է միջամտէ որպէս մի առանձին ձայն, որպէս մի առանձին ծխատէր: Այդ ստորագրութիւններով լի վիճիւնները շատ անգամ անկանոն ճանաչվելով, լուծվում, կորցնում են իրանց նշանակութիւնը, մինչդեռ այդ ակտը, իսկապէս, շատ օրինաւոր լինելով, չէ

կենդանաբանութիւն, բիօլոգիա, մարդակազմութիւն, բնախօսութիւն, առողջապահութիւն, ընդհանուր, բուսայ եւ արեւելի պատմութիւն, պատմութիւն գեղարուեստի, բուսայ եւ ընդհանուր գրականութիւն, հողբանութիւն, քաղաքատնտեսութիւն, մեքենագիտութիւն, էլէքտրոտեխնիկա եւ այլն:

Երկրագործութեան միւնիստրի կովկասեան լիազօր Մեղվեկովի յանձնարարութեամբ աւագ հողաւաճի Տերսիկ հողաշակութեան հետազոտութիւններ էր կատարում Սօջակի լեռնաշղթայի վրա, որի միջով մտադրութիւն կայ տօնել անցկացնել Բոտանիկական այգին քաղաքի հետ յարմար եւ կարճ ճանապարհով միացնելու համար: Այդ հողաշակութեան աշխատանքներից երեւաց, որ լեռնաշղթայի ամենանեղ տեղը այն է, ուր մի կողմից Բոտանիկական այգու մէջ գտնվում է ջրվճիւր, իսկ քաղաքի կողմից Վեկամիսովսկայա փողոցի ծայրը: Տօնելի երկարութիւնը այդ տեղում հաւասար է 63 սաժէնի:

«Standard» լրագրին Պետերբուրգից հազորդում են, որ Ռուսաստանը դիտաւորութիւն ունի մեծացնել հիւպատոսութիւնների եւ փոխհիւպատոսութիւնների թիւը Հարաւային Պարսկաստանում: Լրագիրն ասում է, որ կազակների թիւն եւս կաւելանի Պարսկաստանում:

Պետական թղթերի պատրաստման գործարանում արդէն պատրաստված են նոր ձեւի 7 եւ 14 կօպէկանոց պօստային մարկաներ, որոնք կը սկսեն գործածվել առաջիկայ 1901 թվ. սկզբից:

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Հէկական թաղում տարածված են վնեւրական հիւանդութիւններ: Առհասարակ այդ թաղը վերին աստիճան կեղտոտ է եւ զարահատ Բժշկական հսկողութիւն այդ թաղում պոռնկութիւն անող կանանց վրա չը կայ եւ վարկումը կատարվում է անարգելի կեղտոտ են նոյնպէս հաւառում հրէաների տները: Բազուի նախագահական վարչութիւնը վճել է քանդել տալ հրէական թաղի ծուռ ու մուռ տները, նրանց տեղ կառուցանել տներ: Նոր մակարդակով: Նոր պարչութեան մէջ ծառայող երկրաչափ Բաբոխանանք քանի տարի է գալիս է դրա համար այստեղ, չափում, չափչափում է, բայց վերջ չէ դնում գործին: Ցանկալի էր, որ շուտով կատարվէր այդ մտադրութիւնը, որը առողջապահական տեսակէտից օգտակար բան կը լինէր թէ հրէաների եւ թէ քաղաքացիների համար»:

ԶԻԱՏՈՒՐԻ կայարանից մեղ գրում են. «Նոյեմբերի 28-ին, ցերեկվայ ժամը 11½-ին, այստեղի մարզանայի յոյն վաճառական Իլիօպուլի կառավարիչ՝ Եօնան զոհ դնաց եղբկաւորին Անա թէ ինչպէս երկաթուղու կայարանի առաջ, երբ ապրանքատար շոգեկապը աստիկ արագ մանեալ էր անում, խեղճը ուղեցիկ էր երկաթուղու գծերից միւս կողմը անցնել: Բայց, դժբաղդաբար, չը կարողանալով անցնել մնաց շոգեկապի տակ: Անիւնների հետ միասին մի

համապատասխանում միայն ձեւականութեան յիշված պահանջներին: Մեր երկրի ամեն մի գիւղում դուք կը գտնէք մարդիկ, գրագէտներ, որոնք իրանց ամբողջ կեանքը դատարանների եւ գանազան վարչութիւնների չէմբերը մաշելուց յետոյ, բաւական ընտելացել են վարչական յայտնի գործերին: Այդ տեսակ մարդիկ գիտեն արդէն, որ եւս եւ դուք, օրինակ, երբեմն մի տուն կազմելով մեր հօրեղոր հետ, իսկ այժմ առանձին առանձին տնտեսութիւն ունենալով, իրաւունք չունենք, այնուամենայնիւ, մասնակցելու առանձին ձայնի իրաւունքով հասարակական ժողովներում եւ երբ այդ մարդկանց հարկաւոր է լինում քանդելու մի որ եւ է խնդրի մասին կայացած վճիւր, նրանք օգտվում են այդ ձեւական օրակցի եւ առաջ են տանում այդպիսով իրանց կեղտոտ հայրենիքը վերին աստիճանի հետաքրքրել է, որ ոչ մի հասարակական վճիւր չի կայանում միաձայն եւ դուք չէն գտնի մեր երկրում մի համախոսական անգամ, որի օրինականութեան զէմ տասնեակ գանգատները չը լինեն: Այդ գանգատները տրվում են ոչ թէ ճշմարտութիւնը վերականգնելու համար, այլ որովհետեւ այդ քաջաշուկ սովորութիւն, ախտ է դարձել, այդ գանգատները շարունակվում են անվերջ, որքան հնարաւոր է, մինչեւ որ գործը մի որ եւ է կերպով յայտնի վիճման է ստանում:

(Կը շարունակվի)

քանի անգամ դառնալով, աղիքները բոլորը դուրս են թափվել, եւ ամբողջ մարմինը մաս- մաս էր եղել: Տեսարանը սիրտ կտրատող էր: Եծան ազգով մենքընդ էր, կը լինէր մոտաու- րապէս 30—35 տարեկան, ինքը բաւական խե- րացի, աղին եւ կըթված երիտասարդ էր: Գրե- թէ ամբողջ Զինուորական ողբաց այդ մահը:

ՍՂԱՆԻՑ մեզ գրում են, Վորէն Ստեփա- նէի մահը մեզ եւս վշտացրել: Նոյեմբերի 21-ին հայոց հոգեւորականութիւնը հոգեհանգիստ կա- տարեց հանգուցեալի համար ս. Կարապետ մայր եկեղեցում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

—Կ. Պոլսի ուսաց դեռագնաւորները պա- հանջեց Բ. Դոնից մի առանձին դատաստանա- կան յանձնաժողովը նշանակել դատելու համար այն քրեներին, որոնք այս տարվայ սկսածներն- րի վերջին յարձակումն գործեցին իրարմի ուսուց գլխաւոր հիւպատոսի վրա:

—Ամերիկական մամուլը համեմատաբար ա- լելի քիչ հետաքրքրութիւն է ցոյց տալիս հիւր-գէրի ճանապարհորդութեան վերաբեր- մամբ, քան կարելի էր սպասել: Ամերիկական լրագիրները ցատում են բօքսինքնի վրա, բայց նրանց գրութիւնը անուշաւի են համարում: Նիւ-Եօրքի «Sun» լրագիրը խորհուրդ է տա- լիս նախագահ Կրիւքսին առանց որ եւ է միջոցաւ ուղղակի դիմել Վիկտորիա թագու- ին՝ եւ խնդրել, որ անգլիական կառավարու- թիւնը աւելի զիջող լինի խաղաղութեան պայ- մաններին մէջ եւ չը պահանջէ անպայման հնա- զանութիւն: Լրագիրը ենթադրում է, որ անգլիացիներին սեփական շահերը պահանջում են մեծահոգի լինել դէպի բօքսինքնը: «World» լրագիրը խորհուրդ է տալիս բօքսինքնին դադ- թել Ամերիկա:

—«Westminster Gazette» թուում է այն օ- դուաները, որ քաղել է Գերմանիան հարաւ- ափրիկական պատերազմից: «Երբ որ չէ—ասում է լրագիրը—որ գերմանական պետական ան- ձինք պարծնում են, թէ իրանք ոչինչ չեն անում ձիւրաբար: Եւ յիշատի, պատերազմի սկզբում Գերմանիան կորողացաւ գրաւել Սա- մոան, յետոյ նա ամխայիս կայսրան հիննց պարսկական ծոցում եւ գործունէութեան ա- դատութիւն ձեռք բերեց Նիքոլայի հովտում: Նրա կորուրդը անդրաթիւնը անգլո-գերմանա- կան համաձայնութիւնն էր, որ ազատեց նրան չինական հարցում առանձնացած մնալու վը- տանքից, բայց արաւ նրա առաջ Նանցզի հովտը եւ բացառիկ իրաւունքներ տուեց նրան Շան- դուն նահանգի վերաբերմամբ: Նրա չորրորդ—եւ պէտք է յուսւն, որ վերջին—յափառակութիւնը Վալֆիլ—բայի (կէտերի ծոց) գրաւումն էր: Վերջինը Ս կայսրը կարել է չլուծէր ընդունե- լու Կրիւքսին, որովհետեւ առանց դրան էլ նա չառ բան ստացաւ: Ահա թէ ինչ ծառա- յութիւններ է մատուցանում Կրիւքսի Գերմա- նիային: Նրա ճանապարհորդութիւնը Եւրո- պայում եւ նրանից ծագած ժողովրդական յուզումները օգտակար դէնք են հմուտ դիւա- նագէտների ձեռքում:

—Ռուսաց քաղաքականութեան անդու- թիւնները մասին Պարսկաստանում «Hambur- ger Nachrichten» գրում է. «Ռուսաստանը մեծ վարպետութեամբ զգալ տուեց Պարսկաստանին իր գործութիւնը եւ այդ բանը նա արաւ ժա- մանակին, այն ինչ Անգլիան, որ Պարսկաս- տանում ձգտում է նոյն նպատակին, գոր- ծում է անժամանակ եւ անհամապատասխան միջոցներով: Այս հանգամանքը խտտովանում են եւ Անգլիայում, ուր բացարձակ ասում են, թէ Ռուսաստանը կարող է հիմա առատ ունենալ, որ ցանկ է շատ տարիներ առաջ: Պէտք է ասել եւ այն, որ ներկայ հանգամանք- ները շատ նպատակաւոր են Ռուսաստանի հա- մար: Այն ընդունելութիւնը, որ ցոյց տուեց Ռուսաստանը պարսից Շահին, նշանաւոր չա- փով նպատակեց ուսել եւ պարսիկ մինիստրների բանակցութիւնների անդուլթեանը: Այդ բա- նակցութիւնների շնորհիւ չուտով իրականու- թիւն կը ստանայ ուսուց վարդիմ ծրագիրը այն երկաթուղային գծերի մասին, որոնք պէտք է միացնեն Ռուսաստանը Պարսկաստանի հետ: Նախաձեռնած առաջին երկաթուղային գիծը Նախիջեւանի մօտ կը կտրէ ուսու-պարսկական սահմանը եւ կանցնէ Թուրքի վրայով դէպի Թէհրան: Բայց, ըստ երեւութի, Ռուսաստանը չէ ուզում սահմանափակել այս առաջին անդ- դութեամբ եւ աշխատում է իր հզօր բազուկը տարածել մինչեւ պարսկական ծոցի ամերիկ: Ռու- սաստանը նախատեսում է անգլիական զօրքե- րի ափ իջնելու հնարաւորութիւնը պարսկա- կան ծոցի նաւահանգիստներից մէկում եւ բրի- տանական նաւատորմի յարձակման հնարաւո- րութիւնը պարսկական ծովափնեայ քաղաքնե- րի վրա: Դեռ եւս յայտնի չէ, թէ կը գործադ- րէ արդեօք Պարսկաստանը Ռուսաստանից ստա- ցած գումարները իր նաւահանգիստները ամ- րացնելու վրա, սակայն անկասկած է, որ Ռու- սաստանը սկզբունքով արդէն համաձայնութիւն է կայացրել Պարսկաստանի հետ նրա ափերն ամրացնելու հարցի վերաբերմամբ: Բայց արա- նով էլ չեն վերջանում Ռուսաստանի քաղաքա-

կանութեան անդուլթիւնները Պարսկաստա- նում: Բաղմաթիւ նշաններ ցոյց են տալիս, որ Պարսկաստանի զինուորական ուժը աւելացնե- լու եւ իր սեփական սահմանները պաշտպա- նելու նպատակով Անգլիայի ապագայ յարձա- կութները: Ռուսաստանը պատրաստ է իր վրա առնել պարսկական զօրքի բարեփոխութեան ծանրութիւնը:

ԻՍԼԱՄ ԼՈՒԻՐԵՐ

Մ Ա Ն Ր Ա Ն Կ Ա Ր

Բազուի հետ շարունակում էի ծանօթանալ: Հետեւեալ առաւօտ շատ կանուխ վերկացայ եւ պտուղի քաղաքի զանազան մասերում: Քա- ղաքը անհետաքրքիր է իր չինութիւնների կող- մից: Մի քանի նոր տներ տալիս են եւրոպա- կան ձեւ, իսկ մեծամասնութիւնը դեռ հին ձեւի են: Թիւրքերը չեն սիրում պատուհանները բա- նալ դէպի փողոց եւ կանգնեցրել են փողոցի երկարութեամբ պատներ: Փողոցները նեղ են, առանց մայրերի եւ վատ սալախաւակած:

Դեռ շատ վաղ էր: Վերադարձայ հիւրանոց լուսնակու, նախաձեռնելու եւ սպասելու իմ ուղեկցին, որի հետ միասին պէտք է գնա- յինք Սեւ-քաղաքի գործարաններից մէկը տես- նելու:

Բազում լուսնակու պէտք է օրը մի քանի անգամ եւ ամեն անգամ գուցէ կը դարձանա՞ թէ որտեղից է այդքան կեղտ նստել ձեռք ձեռ- քերի եւ ձեռքերի վրա: Իսկ մի եւ նոյն ժա- մանակ շուրջ էր հազուադիւրս եւ թանգ բան է այս քաղաքում:

Մինչ եւս սպասում էի ուղեկցիս, ինձ կանգնեցին տեղեփօնի մօտ իմիջին էր:

—Այսօր երեկոյան, ասաց նա, մենք լինե- լու ենք ընկեր ծանօթներով Լեւոնեանի մօտ: Նա յատուկ քիչ խնդրում է գալ Հրաւիրատուս կուղարկի, բայց կարելի է տանք չը լինեալ: Այստեղ գրոցը կանգնեւ եւ ժամանակ կանց- կացնեմք: Նրա տանը կուրծք կայ: Անպատճառ կը սպասեմք:

—Սուրախ եմ, պատասխանեցի եւ, ուղեք են լինելու:

—Կը տեսնես քո Թիֆլիսի ծանօթները շատերին:

Եկաւ ուղեկցիս եւ մենք ճանապարհ ընկանք դէպի Սեւ-քաղաք: Ես չեմ նկարագրի իմ տեսնելները: Ինձ համար սակայն այնտեղ կային նորութիւններ: Թէ տեխնիկան եւ թէ բան- ւորների գործը ինձ հետաքրքրեցին: Գործա- րանական կանգնի արտադրութիւնները ի- բրանց լաւ եւ վատ կործանող առարկայ դար- ձան աշխոյժ խօսակցութեան, որ մենք ունե- ցանք կառավարչի հետ:

—Մենք սատարի զբաղված ենք, մի գլուխ զանգատում էր նա:

—Բայց այն բարեփոխութիւնները, որոնց մասին ես խօսում եմ, կը տան ձեզ մեծ բարո- յական մխիթարութիւն եւ հոգեկան հանգս- տութիւն:

—Մեզ կարող է օգնել միայն պաշտօնական կազմակերպութիւնը, ինչպէս է, օրինակ, նախագործների ժողովի խորհուրդը: Նրա ա- ջակցութեամբ կարելի եղաւ հերթական դարձ- նել հիւանդանոցները բազմաշնչելու, բանւորնե- րի պաշտպանութեան եւ ապահովութեան, ճա- նապարհների չինութեան հարցերը: Իսկ մենք, առանձնակի, շատ ենք զբաղված, շատ ենք թոյլ:

—Ձեր սատար ուղիղ է կազմակերպութիւն- ների մասին, ասացի եւ: Բայց ո՞վ պէտք է հո- գայ նրանց իրագործման մասին: Բայց տեխ- նիկայի պահանջներից կան հասարակական, բա- րոյական, կենցաղավարական բարձր պահանջ- ներ, որոնք չը պէտք է կուլ գնան տեխ- նիկայի մէջ:

—Այդ գգում ենք բոլորս, գովամակութեամբ պատասխանեց կառավարիչը, բայց մենք ոչ ժամանակ ենք գտնում եւ ոչ մի հնար էական գործ անդեցնելու այդ ուղղութեամբ:

Երկար չը մնայինք Սեւ-քաղաքում: Մենք բաւականացանք մի գործարան տեսնելով: Պէտք էր վերադառնալ Ուզարեկէյնը կառու- իտեալով եւ ինքնուրու զուրա եկանք փողոց: Կառք չէր գտնվում: Ես առաջարկեցի ուղեկ- ցիս քաղաք վերադառնալ ձիաբաշտի եւս հա- ւանութիւն չը տուեց:

—Լաւ չէ, ասաց նա:

—Ինչի, գործարան եւ:

—Կառքի սպասեմք, աւելի լաւ կը լինի:

Ուղեկցիս բացարձակ, որ ձիաբաշտով ճանա- պարհորդում են Բազում աւելի հասարակ զրիքի անձինք:

—Դեռ Սեւ-քաղաքից ներկի է գնալ ձիա- քաղով: Այնքան էլ օտարների չի համարվի: Բայց քաղաքի մէջ դա «մօլէ տօն» է:

—Մենք Թիֆլիսում, ասացի եւ, այնպէս չենք նայում եւ զիրք ունեցող անձները շատե- րը ճանապարհորդում են ձիաքաղով:

—Այդ ձիւղ է, բայց այստեղ ուրիշ կերպ է: Մինչ մենք խօսում էինք, անցաւ մեր մօտից կառքով մի պարս, որ տեսնելով մեզ՝ կանգ առաւ: Դա իմ ուղեկցի մօտաւոր ազգականներից մէկն էր: Բազում հարատեցած եւ նախաջին բարդ գործի մէջ խառնված: Ուղեկցիս մեզ ծանօթաց- րեց:

—Ինչի էք սպասում, հարցրեց նա:

—Կառքի:

—Համեցէք իմ կառքով, միայն մի պայմանով,

որ ուղիղ կը գնանք մեզ մօտ ճաշելու: Ձեռ ու չու՞մ անելուց եւ իմ ուղեկցի յոր- ւորները լսելուց յետոյ, ընդունեցի հրաւերը եւ գնացինք Ղալբեհանի մօտ ճաշելու:

Ճանապարհին Ղալբեհանի խօսում էր աճուր- ւի մասին: Նա սատարի յարձակում էր Թիֆ- լիսում կազմված ընկերակցութիւնների վրա, որոնք խառնվում են իրանց չինացած գործերի մէջ:

Շուտով հասանք տուն: Ղալբեհանը առաջ- նորդեց մեզ դէպի գեղեցիկ կահաւորված հիւ- րանոցներ, որտեղ նստած էին երկու ուրիշ հիւրեր, եւ նրանց հետ սկսեց քննարկ: Ես դի- տում էի չորշու: Իրաքանհիւր անկիւն այն- պէս էր զարդարված, որ կարծես աղաղակում լինէր թէ՛ ճաշի ինձ, տես որքան չքեղ եմ եւ ճօնա: Մարդ իրան օտար էր գգում այդ հիւրանոցներում: Եւ կարծես տեղ չէր գտ- նում կարգին նստելու եւ հանգստանալու: Կարծես մարդու խտուղեղնում էին ամեն կող- մից:

Հիւրերի հետ սկսեցինք խօսել դէպից դէպի: Այդ ժամանակ տուն եկան երեխաները, որոնք գնացել էին զբօսանքի: Նրանք պիտի անց- նէին հիւրանոցներով: Հետոյից ես յետքի ման- կական քննիչու: Հէնց որ նկատեցին օտար մարդկանց, ձայները կտրեցին եւ արագ ան- ցան հիւրանոցների միջով: Հրաշալի չորս ե- րեխաներ, երեք տղայ եւ մէկը աղջիկ: Տղա- ւորիչ էր փոքրիկ տղան իր համարձակ եւ խը- բոյն գէմքով:

Մտաւ տանտիրոջ մայրը Ղարաբաղի զղես- տով:

—Խնդրեմ ծանօթանա՞ք, ասաց տանտէրը, մեր այսին է, նոր է եկել Շուշուց, դեռ սովոր չէ մեր քաղաքին:

—Ինչ լաւ թո՞ղնք ունէք, ասացի եւ:

—Լաւ, շատ զաչանք ըն, ամա հինչ ա- նիմ, որ լալիլ ըն, գլուխը թափ տալով պա- տասխանեց տատը:

—Լալիլ, զբողված հարցրի եւ:

—Բա հինչ ա, բա լալիլ չըն:

—Ո՞րն է լալիլը, անհնալիստ հարցրի եւ:

—Հէնց լօխ: Բա մարդ կարաց վէշ իւրան թո՞ղնքի հետ խօսի:

Տանտէրը, նկատելով իմ զարմանքը, մէջ մը- տաւ:

—Այսին խօսքերը դուք չը հասկացա՞ք:

—Բանն ինչու՞ն է, հարցրի եւ:

—Ահա ինչու՞ն: Երեխաները իրանց դալեա- կից եւ դաստիարակչուհուց ամեն բան սովորե- կին, բայց այն լեզուից, որով կարող է դրանց տատը խօսել հետները: Ես էլ շատ ցատում եմ, բայց ինչ անեմ:

—Բա լալիլ չըն, հինչ ըն, դուք բանցա՞ք, վրա բերեց տատը:

Այդ հանգամանքը առիթ շատ սուր խօսակցութեան, որին վերջ դրեց տանտիկինը, որը հրաւիրեց մեզ ճաշի:

Երեկոյան եւ Լեւոնեանի տանն էի: Մենք հին եւ լաւ ծանօթներ էինք դեռ մայրաքա- ղաքից: Լեւոնեանը հաստատվել էր ամիշտ Բազում:

Սկսեցին գալ հիւրերը, որոնցից շատերը իմ վաղեմի ծանօթներն էին: Մենք ողջունում էինք միմեանց, իբրեւ պատերազմի արեւել- քից չի ու ցան եղած նախկին զինուորներ, որոնցից իւրաքանչիւրը մի վէրք ունի ստացած, մի սիրելի ունի թաղած, մի թանկագին իր ունի կորցրած:

Մենք մտաբերեցինք հին եւ նոր անցեալից շատ բաներ, բայց դեռ ընդհանուր առարկայ չէինք գտնում խօսակցութեան համար: Մասա- կեանք հաղորդեց նախագործարանատէրերի ա- ռաջիկայ ժողովի մէջ յարուցվելիք մի քանի հար- ցերի մասին տեղեկութիւններ: Այնպէս պատ- մեց արտասահմանի իր տպաւորութիւնները: Աւաղանք յայտնեց, որ նա զբաղված է գրա- կան աշխատութիւնով: Աղախանեանցը ա- սաց, որ նա շատ նիւթ է ժողովել եւ պէտք է ձյակէ: Տրդատեան ամուր սեղմեց ձեռքս եւ ասաց, որ նա չէ մոռացել Թիֆլիսը, եւ հե- տաքրքրվեց վերջին դէպքերից: Յարութիւ- նեան յայտնեց, որ երկու տարուց յետոյ նա կը տեղեկութիւնը դարձնալ Թիֆլիս: Վաղեան եւ Անուշանը խօսեցին գրքեր տարածելու ծրա- ղիւրների մասին: Դարակեան պատմեց մի քանի բաներ Բազում թատրոնի մասին: Ուսնիկեանը խօսեց կուսակցի եւ գործական ոգու պակա- սութեան մասին: Մեր երեխաներից մէկը, Եղիկեանը բանասիրեց զօրքի պատմից իր հին ու նոր տպաւորութիւններից:

—Երբ պատանի էի, ես ո ս կ ի խօսքը կա- պել էի մի չարք իդէալական եւ բանասիրող- ծական հասկացողութիւնների հետ: Արշալոյսը ոսկեծայտ էր, Անահիտը ոսկեծղի էր եւ ոս- կեմայր, Վ դարը ոսկեգար էր, Եղիկեանը զրիքը ոսկեգինի էր... Անցան ժամանակներ, մեծ յոյսերով գնացի Միաձինի իշման վայրը եւ այնտեղ ստացաւ ոսկու մի ուրիշ գործարու- թիւն: Այն է չէս պատմի, անարժան ձեռնա- դրութիւնների, կաշառքների եւ հազար ու մի խարդաւանանքների համար: Իսկ այժմ դի- տում եմ, թէ ինչպէս այստեղ նաւթն է փո- փարկում ոսկու: Ես կը ցանկանայի վե- րադառնալ իմ պատանեկական երազներին:

Աղմկալից էր խօսակցութիւնը: Ամենքը զուարթ էին եւ ուրախ: Ես մոռացայ Բազուի իմ նախկին ծանր տպաւորութիւնները:

—Դեռ էլ էք եկել Մամուշային երկրպագելու եւ աճուրդին մասնակցելու, այս խօսքերով դի-

մեց ինձ Կաճկաճեանը, որ փոքր ինչ ուշ եկաւ: —Ոչ, եկել եմ միայն դիտողութիւններ անե- լու:

—Ի՞նչ դիտողութիւններ: Այստեղ բանը պարզ է: Այստեղ մեր ինտելիգենտը զբաղված է խլացնելով իր խիղճը: Կան մարդիկ, ո- րոնք դեռ չեն մոռացել զօրաւոր խօսքեր եւ երբեմն յուզվում են աստուածային ձայնից- բայց...:

—Շարունակեցէք:

—Տուէք զօրաւոր խօսքեր, որ մենք շար- փենք ապագայի: Թող մամուլը չը բաւակա- նանայ սատածով, խօսէ անդադար: Ի՞նչ պէտք է զանգակներ խփեք անդադար: Թող «Մշակը» ձյալական կոչնակահարի պաշտօն կատարէ:

—«Չվոնար», ուրեմն, ասաց մէկը:

—Այո, չվոնար: Կար մի չը խլացած խիղճ եւ ժողովրդական ցաւի ողբակից, որին այս տարի կորցրինք, դա լուսահողի ձայնն էր: Նրան ոչ ոք չէ փոխարինել:

—Չանգակները մեզ վրա չեն աղբի, ասաց մի պատանի, որ հետաքրքրված էր մեր խօ- սակցութիւնով: Բազուի ինտելիգենտները բա- րոյական կոչիչի համար դարձրել են իրանց անթափանցելի «գրահապատ գնացքներ»:

—Նրանք շատ զբաղված են, այդ դուք մո- ռանում էք: Հասարակական գործը լաւ բան է, բայց որ մարդ ժամանակ չունի:

—Ինչո՞ւ, միթէ երեկոյանը ազատ չեն:

—Այո, բայց ամբողջ օրը տանջվելուց յետոյ՝ մարդ ուզում է հանգստանալ, մէկը թատրոն է գնում, միւրը կուր, երրորդը մի ուրիշ տեղ:

—Բազում նոյնն է, ինչ որ մահմեդականների Գալաթայից, շարունակեց պատանին: —Այնտեղ միայն ոսկորներ եւ դիակներ են ժողովված, իսկ հողի չը կայ: Բազում մոռացված են ար- բաղան երգումները:

—Գալաթայից թուում մեծ է, ասում էր մէկը, իսկ մարդիկ հերոսներ չեն: Բազում փորձա- քար է, երբ ֆրազեօրները, ուրիշ տեղ աղմուկ հանելուց յետոյ, այստեղ եկան, ապացուցեցին, որ նրանք արգելված պողի համը չէին տեսել, որ դալթիկալիչ օձը մեծ հունձ ունի նրանցից հանելու:

—Ով որ չէ կորցրել իր հաւատը, ասում էր մի ուրիշը, նա էլ կը կորցնի, որովհետեւ մի- ջալայրը յուսահատական է: Այստեղ ամեն բան նպատակաւ է խլացնելու ակամջները եւ կարծ- րացնելու արեւը:

Յանկարծ ինձ դուրս կանչեցին: Հիւրանոցի ծառան բերել էր իմ անուշով ստացած հեռա- գիր: Թիֆլիսից ինձ հեռագրում էին, որ վախ- ճանկեց Ուրէն Ստեփանէն:

Հեռագիրը սատարի տպաւորութիւն գործեց: Ուրէն Ստեփանէն շատ յայտնի էր բազուցի- ներին: Բոլորի ականակն հնչում էին դեռ նրա քաղաքները: Ամենքը վշտացան:

—Ահա մի մարդ, զգացված բացականչեց Աթեիսեանը, ահա մի մարդ, որի համար չը կա- յին խլացած ակամջներ եւ քարաց

Типографія Грузинск. Т—ва, Большая-Венковская ул., № 27.